**Արձանագրություն N 2**

***Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար հոլովակների հեռարձակման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/23» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան

«04» «Նոյեմբեր» 2019թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ — Մ. Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ — Լ. Բաբախանյան, Ք. Գալստյան

Հանձնաժողովի քարտուղար — Հ. Սարգսյան

***1. Ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Մ.Մխիթարյան)***

Ընդունել ի գիտություն, որ 23.10.19թ. հրապարակվել է հրավեր armeps.am համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2019 թվականի հոկտեմբերի 30-ի, ժամը 14:00-ին:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Մասթեր ԷյԴիՎի» ՍՊԸ | *info@mecintegral.am* | 00091008 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Մ.Մխիթարյան)***

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Մ.Մխիթարյան)***

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերից բացակայում էր էլեկտրոնային ստորագրությունը, ինչի պատճառով նիստը կասեցվել է մեկ օրով և համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի «Մասթեր ԷյԴիՎի» ՍՊԸ-ին առաջարկվել է մեկ օրվա մեջ շտկել

արձանագրված անժշտությունը և հրավերով պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ ուղարկել ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/23 ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին մինչև 31.10.2019թ. հոկտեմբերի 31-ի ժամը 18:00-ն: Մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը ուղարկվել են սահմանված ժամկետում: Ուստի մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## 4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

---

***(Մ.Մխիթարյան)***

Հարցումներ չեն եղել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## 5. Բանակցությունների վարման մասին

---

***(Մ. Մխիթարյան)***

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/23» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և հրավերի I-ին մասի 7.6 և 7.7 կետերի պահանջները (գնման ընթացակարգը իրականացվել է ՀՀ  Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքերով) մասնակիցը հրավիրվել է բանակցությունների՝ բոլոր չափաբաժինների մասով (ոչ ավտոմատ ծանուցում՝ armeps համակարգի միջոցով): Բանակցությունների օրը՝ 2019 թվականի նոյեմբերի 4-ին ժամը 15:00-ին մասնակցությունը ապահովել է մասնակից կազմակերպության տնօրենի կողմից լիազորված Սամվել Սահակյանը (լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը կցվում են): Բանակցության ընթացքում 1-ին չափաբաժնի մասով «Մասթեր ԷյԴիՎի» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ներկայացրեց նոր գնային առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## 6. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

---

***(Մ.Մխիթարյան)***

Կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկները մինչ բանակցությունները և բանակցություններից հետո ներկայացվում են ստորև.

Մինչև բանակցությունները.

| Չ/Բ համարը | Չափաբաժնի անվանումը | Կազմակերպության անվանում | Գնային առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | Գովազդային (սոցիալական) հոլովակների հեռարձակում | «Մասթեր ԷյԴիՎի» ՍՊԸ | 38,775,000 | 7,755,000 | 46,530,000 |
| 2 | Գովազդային (սոցիալական) հոլովակների հեռարձակում | «Մասթեր ԷյԴիՎի» ՍՊԸ | 42,300,000 | 8,460,000 | 50,760,000 |

Բանակցություններից հետո.

| Չ/Բ համարը | Չափաբաժնի անվանումը | Կազմակերպության անվանում | Գնային առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | Գովազդային (սոցիալական) հոլովակների հեռարձակում | «Մասթեր ԷյԴիՎի» ՍՊԸ | 38,491,667 | 7,698,333 | 46,190,000 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *7. Առաջին տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին*

---

***(Մ.Մխիթարյան)***

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/23» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել՝

- «Մասթեր ԷյԴիՎի» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *8. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին*

---

***(Մ.Մխիթարյան)***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/23» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Մասթեր ԷյԴիՎի» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**9.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի ենթակետերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին**

-----------------------------------------------------------------------------------

***(Մ.Մխիթարյան)***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի և հրավերի 1-ին մասի 2.5 կետի պահանջները ՝ որոշվեց առաջարկել «Մասթեր ԷյԴիՎի» ՍՊԸ-ին՝ ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա /08.11.19թ. ժամը 18:00/ ընթացքում ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթեր (նախկինում կատարած նմանատիպ պայմանագրեր):

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**10. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

-------------------------------------------------------------------------------

***(Մ.Մխիթարյան)***

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/23» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում ՀՀ ՊԵԿ հարցման վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------ Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ------------------------ Լ.Բաբախանյան

------------------------ Ք. Գալստյան

Քարտուղար՝ ------------------------ Հ. Սարգսյան

INTEGRAL
media agency

"Master ADV" LLC
Yerevan 0025, RA
5 Aleq Manukyan str
tel: (+ 374) 010 56 47 63
www.mecintegral.am
info@mecintegral.am

Հավելված 2

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/23» ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

# ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2019/23» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, Մասթեր Էդ Դի Վի ՍՊԸ-ն առաջարկում է
(մասնակցի անվանումը)

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

| Չափա-բաժինների համարները | Ծառայության անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | << Գովազդային (սոցիալական) հոլովակների հեռարձակում, N1 >> | 38 491 667 դր (երեսունութ միլիոն չորս հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր վաթսունյոթ) | 7 698 333 դր (յոթ միլիոն վեց հարյուր իննսունութ հազար երեք հարյուր երեսուներեք) | 46 190 000 դր (քառասունվեց միլիոն հարյուր իննսուն հազար) |

Մասթեր Էդ Դի Վի ՍՊԸ, Տնօրեն Տ. Կոսյան
(մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

(ստորագրությունը)

«ՄԱՍԹԵՐ ԷԴԻՎԻ»
"МАСТЕР ЭЙДИВИ"
"MASTER ADV"
00091008

Կ. Տ.

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

Digitally signed by
KOSYAN TATEVIK
6714840403
Date: 2019.11.05
11:47:52
GMT+04:00

INTEGRAL
media agency

"Master ADV" LLC
Yerevan 0025, RA
5 Aleq Manukyan str.
tel: (+ 374) 010 56 47 63
www.mecintegral.am
info@mecintegral.am

ք. Երևան 04.11.2019թ

# ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

«Մասթեր ԷյԴիՎի» ՍՊ Ընկերության տնօրեն Տաթևիկ Կոսյանը (նույնականացման քարտ 000345546 տրված 13.11.2013-ին 006-ի կողմից) լիազորում է Սամվել Սահակյանին (նույնականացման քարտ 000342808 տրված 12.11.2013-ին 012-ի կողմից) հանդես գալ ՀՀ Առողջապահության նախարարություն և բանակցություններ վարել վերջինիս կողմից ԳՀԾՁԲ-2019/23 ծածկագրով գնանշման հարցման հրավերի շուրջ:

Լիազորագիր տրվում է 1 (մեկ) տարի ժամկետով:

«Մասթեր ԷյԴիՎի» ՍՊԸ
Տնօրեն՝ Տաթևիկ Կոսյան

«ՄԱՍԹԵՐ ԷՅԴԻՎԻ»
"МАСТЕР ЭЙДИВИ"
"MASTER ADV"
00091008

Digitally signed by
KOSYAN TATEVIK
6714840403
Date: 2019.11.05
11:46:47
GMT+04:00




Digitally signed by
KOSYAN TATEVIK
6714840403
Date: 2019.11.05
11:31:17
GMT+04:00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ARMENIA ARMENIA

12.11.2013 012

2110810637

ՀԱՅ

ARMENIAN

```
I<ARM0003428089<<<<<<<<<<<<<<<
8110114M2311126ARM<<<<<<<<<<<0
SAHAKYAN<<SAMVEL<<<<<<<<<<<<<<
```